ընէնս միմիայն Հայրապետն հայոց և կամ Եպիսկոպոս փոխանորդն նորայ և նախարարն հայոց, համարեսցի երկուս ձայնս իբր կամք երկու անձանց և ունեսցեն պատիւ զօրութեան երկու արանց, զի կամք նոցայ համարեսցի երկուս, այսինքն թէ հայրապետ, թէ նախարար 'ի թուաբանութիւն կամաց համարեսցի երկու կամք Հայրապետին և երկու նախարարին, մնացորդք տանուտէրաց ըստ իւրաքանչիւրոյ մի։

## ԳԼՈՒԽ ԺԸ.

Ամենայն պաշտօն եթէ նախարարութեան, եթէ դատաւորութեան, եթէ խորհրդակցութեան իշխանութեան, ամենայն կարգ զինուորութեան, դպրութեան, գծագրութեան և ամենայն կառավարութեան 'ի տանէն հայոց և 'ի տանուտերացէ ելցէ, և 'ի վերայ նոյն պաշտօնատարութեան տալոյ իշխանութիւն 'ի տանէն և տանուտերացէ հայոց թուղթ պաշտօնի ըստ Օրինաց։

## ԳԼՈՒԽ ԺԹ.

Բոլոր յաշխարհէն հայոց որքան փոխանորդք որ գոցի կէսն 'ի նոցանէ, այսինքն մի 'ի երկուց արանց մտցի 'ի կարգ տանուտէրութեան և միւս մինն 'ի պաշտօն իշխանութեան։